

# ՀԱՅՔ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Editor, M. S. Gabriel, M.D. 202 W. 23d St. New York Խմբագիր, ՏՐ. Մ. Ս. Գաբրիելյան



ՆԵՐՍԷՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ





HAÏK

Entered as second-class mail matter at P.  
O., New York, N. Y.

Address Հասցե  
Editor of "Haïk," 202 West 23 St.  
New York U. S. America.  
կամ Redaction de la Revue "Haïk," ԼՆ :

«Հայք»ի իւրաքանչիւր թիւը կը  
բաղկանայ 16 երեսներէ, և կը հրատա-  
րակուի ամիսն երկու անգամ :

Տարեկան բաժնեգինն է ամեն երկ-  
րաց համար երկու տուար կամ 10 ֆրանք  
Կանխիկ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատկեր Ներսէս Պատրիարքի.— Ներսէս  
Վարժապետեան.— Ատենախօսութիւն Ներսէս  
Պատրիարքի յատենի Ազգային Ժողովոյ.— Նա-  
մակ Կ. Պոլսէ.— Նամակ ի Մալաթիոյ.— Ուս-  
թըրի Հայոց մէջ մեծ կոիւ մի.— Ամերիկայի  
Հայերն կրնա՞ն սթրայք ընել — «Հայքի» Շը-  
մորհակալութիւնք. — Ազգային լուրեր — Տե-  
ղական լուրեր :

Կը խնդրեմք որ մընի օրաքրի կամ  
մանտա տը փութի միջոցաւ խմբագրութեա  
նըս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օ-  
ֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն  
մեզ հասցունելու հրահանգ տան իրենց  
քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ  
դիւրութիւն ընծայած կը լինին մեզ :

### NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9th Փողոց

Պրօտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տո-  
լարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը  
կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տե-  
սակ գրքեր :

Հայրենասէր Ներսէս Պատրիարքի մեծ  
ատենախօթիւնն զոր 1878ին արտասանեց  
յատենի Ազգային Երեսօխոսանական Ժողո-  
վոյ, Հայկական Խնդրոյն պատմութիւնն  
է մեծագոյն հեղինակին և գործիչին պեր-  
ճախօս չրթամբք պատմուած։ Լի քաղա-  
քական բարձր Հայեցողութեամբ՝ Հայրե-  
նասիրական աւիւնով և հոգեյոյզ պերճա-  
խօսութեամբ, Ատենախօսութիւնն ամեն  
Հայու ոչ լոկ ուշադրութեան ալ լուրջ  
ուսումնասիրութեան է արժանի, և ահա  
այդ նկատողութեամբ է որ մեր ընթեր-  
ցողաց առջեւ կը դնեմք զայն այսօր :

Այս առթիւ Ներսէս Պատրիարքի պատ-  
կերն երկրորդ անգամ լինելով կ'ընծա-  
յեմք մեր ընթերցողաց, այս անգամ  
«ՀաՖ-թոն» ելեքտրատիպ օրինակու-  
թեամբ բնագիր լուսանկարէն, ուստի  
եւ կատարելապէս ճիշդ և ամենայնիւ բը-  
նական, մինչ այն զոր անցեալ տարի հրա-  
տարակեցինք Նախապէս ձեռքով գծագ-  
րուած լինելով՝ զուրկ էր լուսանկարչա-  
կան ճշգրտութենէ :

Տարակոյս չունիմք թէ մեր պատ-  
բաժանորդք լիովին պիտի գնահատեն գ-  
ներկայս :

\*

\* \*

ԸՆԴ ՄԱՄԼՈՎ

ՆՈՐ ՀՈՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

### ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Մ. Ս. Գաբրիէլեանի ազգային ատե-  
նախօսութիւնք, ըստ մեծի մասին ան-  
տիպ՝ ի մի փոքր հատոր ամփոփուած ի  
լոյս կ'ընծայուին :

Հրատարակիչն կը յուսայ թէ այդ հը-  
րացայտ և աւիւնազեղ ճառեր պիտի ծա-  
ռայեն մոռցուած ահաւոր իրողութիւններ  
յուշ ածել և արծարծել Հայ երիտասար-  
դոթեան Հայրենասիրական հուրն :

Մէկ օրինակի գինն է 20 սէնթ կամ  
մէկ ֆրանք — կանխիկ վճարելի :



## ՆԵՐՍԷՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Մեծ Պատրիարքին վերայ կենսագրական այս տեսութիւն գրելու յսկսելս՝ կասկած մի կը տալնապէս զիս թէ արդեօք այսպիսի ժամանակներ երբ «Հայրենասէր» «մեծ» «տաղանդաւոր» և նման ածականներ անգագարու անդէպ կրկնութեան ազդեցութեամբ մաշած ու փոքրկացած են, ինչպէս պիտի բաւեն նշանակել ճշդիւ զմեծ գործիչն, զՆերսէս Վարժապետեան:

Սովորական դարձած մարդիկներու շրջանէն դուրս ելնեք ուրեմն, և ըսենք թէ Ներսէս գեղեցիկ ոք էր — գեղեցիկ մարմնով և գեղեցիկ՝ հոգեով: Գեղեցիկ որպէս տաշուած աղամանդն, որպէս լուսափայլ ցօղն, որպէս արեգի ճառագայթըն:

Բնութեան մենաշնորհեալ մէկ զաւակըն էր նա, ամենակերպ ճիւղք ճոխապէս օժտեալ: Նորա պանծալի հասակ, յաղթիրանն ու վայելուչ կերպարան, թուի հերք, փայլուն աչկունք և փափուկ ձեռքեր, — նորա մարմնական շնորհաշուք երեւոյթն կը թուէր դիւթիչ արտափայլութիւնն լինիլ նորա լուսագեղ հոգւոյն:

Պատկառելի և միանգամայն համակրելի զօք հանդիսացունող բազմապիսի և գրեթէ միմեանց հակադիր ու հակակշիռ ձիրք հազիւ երբէք կը միանան միեւնոյն անձի վերայ, որպէս միացած էին յանձին Ներսիսի, յորում վեհութիւն և հեզութիւն, ու ժգնութիւն և անուշութիւն, արութիւն և զգուշաւորութիւն, հզօր իմացականութիւն և հաստատուն պարկեշտութիւն կը յօրինէին մի ներդաշնակութիւն հիանալի:

Յիրաւի Ներսէս նորանշան անձնաւորութիւն մ'էր յազգին: Ի հասակի անդ քսան ամաց, վարդապետական օծումն ընդունած էր նա, և Հասգիւղի Ս. Ստեփանոս Եկեղեցւոյ բեմէն կը պերճախօսէր իբրև հասուն և իմաստալից վարդապետ: Շարունակեց նա զարգանալ արագ և գեղափթիթ, և ի հասակի քսանհինգ ամաց՝ ձեռնադրուեցաւ եպիսկոպոս: Նուապար-Շահնազարեան վարժարանի վերատեսուչն էր նա երկար ժամանակ, և իւր բո-

լոր պաշտօնավարութեանց մէջ քաջ կը փայլէր իբրև խօսքի և գործի մարդ միանգամայն, այնպէս որ, դեռ երեսուն և եօթն տարեկան, ընտրուեցաւ Պատրիարք Կ. Պոլսոյ և յաջորդեց Խրիմեան Հայրիկի:

Պատրիարքական պսակն եղած էր երբէք այնքան փշուտ, կամ գաւազանն այնքան դժուարակիր, որքան եղաւ Ներսիսի օրով: «Հայկական Խնդիր» կոչուած տունկըն, զորոյ Խրիմեան Հայրիկ սերմանած էր սերմն ու ջրած, բուսաւ ընդ ջերմ խընամովք Ներսիսի, բուսաւ սակայն ահեղ փոթոբկոց, արեան հեղեղներու, զարհուրելի գետնաշարժի ցնցմանց մէջ, և Ներսէս, անձնուէ՛ր մշտի, յանձն առած ամեն վիշտ ու վտանգ, տատասկի մէջէն ու փրկուց վերայ չահատակելով, պարիսպ ու հովանի եղաւ տնկոյն որոյ պտուղ պիտի լինէր Ազատութիւն Հայրենեաց:

Խրիմեանի դէմ գինոյ խաւարն հանեց իւր արբանեակներ Ներսէսի ևս դէմ: Ա՛հ, որպէս վիրաւորեցին զսիրտ հայրենասէր գործիչին: Երեսփոխանք ոմանք ստանձնեցին, խաւարամիտ ժողովրդապետութեան ոգիէն ներշնչեալ, չարամիտ հարցապնդմամբ յարձակիլ Պատրիարքին վերայ յատենի Ազգային Երեսփոխանական Ժողովոյ, իբր թէ նա պատասխանատու և յանցապարտ եղած լինէր վասն յուսավրէպ ելիցն դիւանագիտական այնքան ջանադրութեանց: Սուլթանի Համիտ լսելով այդ միջադէպի մասին, ի տես կոչեց զՆերսէս և խնդրեց իմանալ թէ ոյք են նորա ժպիւրհ դիմախօսք, որպէս զի արժանաւոր պատիժն կրեն: Պատրիարքն պատասխանեց թէ ինչ որ ինքեան և երեսփոխանաց ոմանց միջև տեղի ունեցած է, անկարելորդ վէճ մ'է՛ որպիսի կը պատահի հօր մի և իւր պաւակաց միջև, և հայրն կը ներէ: Փատիճան, որ չէր կրցած խուսափիլ Ներսիսի բարոյական իշխանութենէն, սկսաւ սքանչանօք հայիլ ի նա երբ նորա սրտի վեհութեան այդ ապացոյց ևս տեսաւ:

Տեսան նորա հայրական մեծաբարոյութեան ապացոյցն նաև այն երեսփոխանք որք ժմերտեալ էին վիրաւորիչ յարձակումներն ընել, և որք, ի լուր ինքնակալին ցառմալիւր հետաքրքրութեան, սարսափած էին յոտից ցգլուխ և մտատանջուած թէ արդեօք ո՞ր դատան կ'լիմայի



տակ իրենց մնացեալ օրեր անցունելու պիտի դատապարտուէին: Չարք չեն կրնար լիովին հասկանալ զբարին: Ներսէս չափազանց մեծ էր իւր գրեթէ իշխանազօր ոյժ գործածելու համար ի ջախջախել իւր գծուծ հակառակորդներ: Նա կը շատանար փաստ և բարոյական ազդեցութիւն միայն ի գործ դնելով:

Արդէն, ապաքէն, 1878ին, յատենի Ազգ. Երեսփ. Ժողովոյ, պատասխանատու եղած էր այն խորիմաստ և պերճախօս ատենախօսութեամբ ուր Ներսէս այլակերպեալ կ'երեւի՝ կրելով լուսեղէն պսակ ի գլուխ և բարբառելով հայրենասիրութեան հրեղէն լեզուաւ, և, ա՛հ, որքան աւելի կը յառաջանայ յատենախօսութեանն այնքան աւելի ի վեր և ի վեր կ'ամբառնայ ի բարձունս դիւցազնական վեհութեան, և Ազգին ներկայացուցիչք՝ հիացած ընդ փառահեղ տեսիլն՝ կը խոնարհին խորապէս և միաձայն քուէարկութեամբ իրենց շնորհակալեաց և վստահութեան հաւաստիքն կը դնեն յոտս մեծ Պատրիարքին:

Այլ և ոչ հրաշք բաւական են դարձի բերել կամակորներն: Խաւարամիտք շարունակեցին վիրաւորել զՆերսէս, որ իւր պատրիարքութեան վերջին տարիներն իւր բազմակրկնակ հրաժարականներու հակառակ պաշտօնավարեց տխրամած ու սըրտաբեկ:

Ո՛չ, Ներսիսի բարձրութեան չէին կրնար հասու լինել խաւարամիտ գործիչք և սոցա դիւրախարհ հետեւողներ, որոց երեսնէն բազում տազնապներ կրեց նա և շատ վէրքերու ժուժաց անմռունչ: Այդ անձնագոհ հովուի գէժ խարդախութեան և ազգադաւ դիտումներու կասկած անգամ չընչողներ եղան, ինչ որ, որպէս Ներսէս կ'ըսէ յատենախօսութեանն, «նոր ապացոյց մը կը հանդիսանայ այն չարեաց՝ որ ազգին գերութեան վիճակը գործած է, յամառ անվստահութիւնը բնական յատկութիւն մ'ընելով ազգայնոց:» Յամառ անվստահութիւն, անձնուիրութեան չհաւատալ, ամեն մարդ շահախնդ իր կամ փառամոլ կարծել, հետեւապէս և անպատկառ ապերախտ վարմունքն ալ այնպիսեաց նկատմամբ արժանաւոր տրիտուր համարիլ, նախանձ և քուէութիւն և այլ այսօրինակ նողկալի և որտաբեկիչ յատկութիւններն են որք անձնուէր հայրենասիրին բուն տանջանքն և չարչարանքն կը

հայթայթեն ոչ թէ այն աշխատանք՝ տքնութիւնք ու զոհողութիւնք զորոնք անձառ զոհութեամբ յանձն կ'առնու:

Այդ կերպիւ ահա ճշմարիտ նահատակ մ'եղաւ Ներսէս:

Բայց պարտ է նաև դիտել միւլթարական կողմն: Ազգին մեծամասնութիւնն հաւատաց Ներսիսի և անխառն ըսքանչանօք մեծարեց զնա: Ապացոյց նորա ընտրութիւնն ազգին բարձրագոյն գահուն՝ Ս. Լուսաւորչի աթոռոյն, ի հասակի քառասուն և եօթն ամաց: Ներսէս մերժեց ոսկայն կաթողիկոսական ցուպն, որպէս կանխաւ ևս հրաժարած էր ընտրելութենէ:

Նոյն տարին իսկ վախճանեցաւ Ներսէս, և յայնժամ Ազգին ընդհանուր և խորին սուգն նորոգ ապացոյց մի տուաւ երախտագիտական ջերաջեր զգացմանցն: Եւ ինչպէս հնար էր որ մեծ Հայրապետին հօտն չտար այդպիսի ապացոյց մինչ օտարք անգամ սրտագին սգով մեծարեցին Հայ Պատրիարքին յիշատակն — օտար եկեղեցեաց և օտար մամլոյ և դեսպանատանց ներկայացուցիչք և օսմանեալ առաքիճանաւորք մեծ բազմութեամբ խառնուած էին մարդկային այն անզրաւ բազմութեան որ կը հետեւէր վախճանելոյն դադարին: Այո՛, Հայոց հետ նաև մայրաքաղաքին բոլոր մշակեալ և վերին դասուց օտարազգիք զգացին թէ մեծ մարդ մի պակսեցաւ, վեհ ոգի մի թաւ իրենց աշխարհէն, և զայդ զգալն է ճշմարտապէս սգալ:

Սգացին զվարժապետեան Ներսէս ազգին վարժապետք ու վարժարանք բոլոր սգով մասնաւոր, զգալով թէ կրթութեան և վարժարանի մեծ բարեկամն ու հզօր նեցուկն կը կորուսանէին նորա մահուամբ:

Սգացին հայրենասէրք, զի զգացին թէ Հոյատոտանի բարեկարգութեան կամ Հայկական Խնդրոյն մեծ ախոյեան և իմաստուն վարիչն աներեւոյթ կը լինէր:

Ամենեքին սգացինք յոյժ յոյժ, և սակայն, աւա՛ղ, յայնմ հետէ համոզուեցանք թէ չազացինք բուական: Ամեն օր դառնագին կը հառաչեմք այդ վախճանեալ առաջնորդին ետեւէ երբ կը տեսնեմք Պատրիարքական աթոռն ստորնացած, եւ արի Ներսիսի ցուպն ի ձեռս Սր. Սչըգեանի անարգեալ և փշրեալ...



Այս ակնարկութեամբ չեմք ուզեր խոսել Սր. Աշըգեանի արժանիքն, որ կրնայ իբրեւ վանական և իբրեւ քարոզիչ ունենալ շատ արժանիք, այլ ո՞ անգէտ է այսօր թէ նա պատրիարքական դահուկ վերայ բազմելու իմացական և զգացական բարձրութիւնն չունի: Նա չէ սակայն միակ մեղադրելին, այլ յաւէտ մեք, արեւմարքս, որ զնա ընտրած եմք պատրիարք և այսքան տարիներէ ի վեր տեսած լինելով թէ անագին սխալ մ'ըրած եմք, կը մնամք անտարբեր և, մինչ մէկ կողմանէ ամենահնար իմաստութեան տէր լինելու յաւակնութիւնն ունիմք, խղճալի կերպիւ կը վրիպիմք արժանաւորագոյն եպիսկոպոս մի նմա յաջորդեցունելէ:

Պիտի ըսէ՞ք թէ քան զԱշըգեան Սրբազան չկայ յԱզգին կարողագոյն պատրիարքոց, ա՛յն Ազգին մէջ որ Ներսէսներ ու Խրիմեաններ ծնած է: Եթէ յիրաւի չկայ, վա՛յ մեզ, զի սպառած և չքացած է ուրեմն Ազգն:

Կը հաւատամք սակայն թէ կան արժանաւորագոյնք, եթէ միայն գիտնամք օգտիլ անոնցմէ փոխանակ տղայաբար ողբալու:

Ներսէս ինքն ըսաւ յատենախօսութեանն «այսպիսի գործեր ո՛չ մէկ օրուան մէջ և ոչ մէկ մարդու ձեռքով կրնան կատարուիլ»: Նա սկսաւ գրծն, Ազգն պարտի շարունակել, և շարունակել կարենալու համար նոր ՆԵՐՍԷՍ մի, նոր մարդ մի, նոր ՆԱՅՏԱԿ մի պէտք է նստի յաթոռ պատրիարքական, և շարունակէնորա քաղաքականութիւնն:

Ներսիսի ազգային քաղաքականութիւնն շարունակելու համար պէտք է Ներսէսի հոգին ունենալ: Տեսնենք զոնէ թէ ի՛նչ էր նորա հայկական քաղաքականութիւն, զոր թողուց մեզ կտակ, և թէ ի՛նչ դասեր ունիմք մեք առնուլ անտի: Զի Ներսէս մեռաւ բայց չանհետացաւ նա հայ աշխարհէն: Նորա խորհուրդն ու նըպատակ կը մնան: Քննենք զայնս և ջանանք ըմբռնել լիովին:

Ներսիսի Ազգային քաղաքականութեան վերայ խօսիլ կայ մեզ յառաջիկայ թուով, և թերեւս անդրադունիւ ալ Մինաս Զեբազի քաղաքականութեան վերայ:

## ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻԻՆ

Տ. Տ. ՆԵՐՍԷՍ

Ս. ԵՐԶԵՂԻՍՏԵԱՊՈՍ

Պատրիարքի Կոստանդնուպոլսոյ

Յազգային Ժողովի Հայոց,

ի 21 Յուլիսի, 1878

Տեարք Երեսփոխանք,

Ամիս մ'առաջ սոյն այս պատկառելի ժողովին մեջ պատասխանելով Հարցման մը, զոր ազգասէր ոմանք Երեսփոխանք կ'սեղծէին ինձ Ազգային Խնդրոյն նկատմամբ, Եւրոպական Տերութեանց քով մեր ըրած ջանքերը և գտած համակրական ընդունելութիւնը զկնի յառաջ բերելու, կ'ըսէի ձեզի. «Ես չեմ միայն աշխատող, այլ ի՛մ է բոլոր պատասխանատուութիւնն»:

Դեռ ժամը չհնչեց ամբողջ այս պատասխանատուութեան. զի կրկին է նա. մին այսօր Հայոց տյս մեծ ժողովին առջեւ, և միւսը տղգին առջեւ, յանցեալն, ի ներկայն և յապագայն, և պատմութեան առջեւ:

Այ՛ո՛ ես այս պատասխանատուութիւնը շատ աւելի ծանր գագցի քան զոր կրնաք երեւակայել, և չգագցի զայն՝ միայն ձ'եր առջեւ՝ որ այս օրուան ազգը կը ներկայացնէք, այլ և զգագցի զայն՝ մեր նախնեաց հոգիներուն ու յիշատակին առջեւ, որ կանգնեցին ու պահեցին զՀայ Ազգն ու զՀայաստան, և զգագցի զայն այն անհամար հայ սերունդներուն առջեւ, որք պիտի յաջորդեն մեր սերունդին:

Եթէ երկրորդն այս պատասխանատուութեանց շատ աւելի ծանր է ու ահեղ քան զառաջինը, ներեցէք ըսել հիմակուց, ես այդ պատասխանատուութեանէն բնա՛ւ չեմ վախնար, զի ամբողջապէս ունիմ պատասխանել, և խճմտանքս անդորր է և զուարթ: Իսկ աւելի փափուկ է առաջին պատասխանատուութիւնս, այն որ կոչեալ եմ այսօր կատարել ձեր առջեւ. եւ եթէ իմ բացատրութիւններս գոհ չընեն զձեզ, ուրիշ բան չը մնար ինձ ընել, այլ պատմութեան դատաստանին ապաւինիլ որուն ենթարկեալ ենք ամենքս ալ. ե՛ւ ես և՛ դուք, եւ՛ որք այս չրջապատէս



դուրս կը խօսին եւ կը գրեն:

Եւ զայս ըսելով ոչ՝ թէ բնաւ նուազ կ'ուզեմ՝ զգալ ձեր դատելու իրաւունքն ու իշխանութիւնը, այլ զի յանուն ազգային պառկառելի շահուց, պէտք է նախամեծար համարիմ՝ կրել դատապարտութիւն անիրաւ՝ նա՛ն ազգիս կողմէն, քան թե հրապարակել զամենայն: Եւ եթէ ամեն տեսակ հաւածանք, դատապարտութիւն, պատիժ և փորձութիւն յաճախ չէի առած առաջին օրէն, զգուշացունելով զայլս այն ամենէն և զիս միայն կէտ նպատակի ընծայելով, եթէ յաճախ չէի առած զոհուիլ ինչ՞ու ուրեմն ձեռնարկեցի յայս գործ:

Տեսարք Երեսփոխանք,

Հայկական խնդիրը, իր արդի ձեւին մէջ ինք իրմէ չ'ծնաւ, այլ ընդհանուր Արևելեան Խնդիրէն ծագեցաւ: Ահաւասիկ ի՛նչպէս. Հայոց խնդիր մը կար տաան և աւելի տարիներէ ի վեր, մինչ դեռ ս'չ չէրսէք—Պոսնայի խնդիր կար, ո'չ Պուլկարաց Խնդիր քաղաքական ձեւով: Հայաստանի Հայոց կրած հարստահարութեան Խնդիրն էր այն, Ազգին ու Տերութեան մեջ մնացած էր, և Ազգը անընդհատ տասը տարի իր Յանձնաժողովներով, իր Քաղաքական Ժողովներով, իր Երեսփոխական Ժողովներով, իր Պատրիարքներով, հարստահարութեանց բարձումը կը հայցէր Բարձրագոյն Դռնէն: Ահա այս էր միայն Հայոց խնդիրը: Եկաւ Հէրսէք—Պոսնայի խնդիրը, և ապա Պուլկարիոյ խնդիրը:

Այս երկու խնդիրներուն մէջ խառնուած էր հարստահարութեան խնդրոյն հետ ազգային ինքնօրինութեան խնդիրն ալ: Այս դաւառները ապստամբութեան դրօշը պարզեցին իրենց օրինաւոր Տէրօշը դէմ: Արիւնահեղութիւնը Եւրոպայի միջամտութիւնը հրաւիրեց, և այս մեծ կայսրութեան դրացի ուրիշ մեծ կայսրութիւն մը յանուն Քրիստոնէութեան ամենէն աւելի ձայն բարձրացուց: Տերութիւնք ի ժողով գումարեցան ի Պոլիս: Ի՛նչ ըրաւ Հայոց ազգը. օրինաւորութեանէն դուրս չեկաւ. Հայերը գոհ էին որ Օսմանեան Տերութեան ներքեւ էին. այլ իրենց վիճակէն դառնապէս դժգոհ էին. և որովհետեւ ընդհանուր քրիստոնէից վիճակը բարւոքելու խօսքեր կ'լլային, Հայերն ալ ընդհանուր բարեկարգութենէն սպասեցին իրենց վիճակին բարւոքումը:

Ձեր Պատրիարքը, գիտէք արդէն, Տեսարք Երեսփոխանք, պարապ չկեցաւ. աշխատեցաւ Բ. Դրան քով, աշխատեցաւ դեսպանաց քով: Այլ դեսպանաժողովը փոխանակ ընդհանուր վիճակին բարւոքումը նկատողութեան առնելու, նկատողութեան առաւ միայն Հէրսէք—Պոսնայի և Պուլկարաց խնդիրները: Այս անիրաւութիւն մըն էր մնացեալ քրիստոնէայ ժողովրդոց, և ներեցէք ըսել, թերեւ իմ սահմանէն քիչ մի դուրս ելնելով, Օսմանեան կայսրութեան ալ քայքայումը կը պատրաստէր՝ ապստամբութիւնը քաջալերելով:

Օսմանեան կայսրութիւնը Դեսպանաժողովին այս որոշումը չընդունեց: . . . Այլ մեծագոյն չարիք մ'ու աղէտք փրթաւ ընդհանուր երկրին վրայ. պատերազմը. Օսմանեան կայսրութիւնը այս մեծ պատերազմէն առաջ, իր գորութիւնը գործածած էր Հէրսէք—Պոսնայի և Պուլկարիոյ ապստամբութեանց դէմ: . . . Հուսկ ապա Պուլկարիոյ արգաւանդ դաշտերը և, աւաղ, մեր այնքան ազգայնոց արեամբն ու քրտինքովն ողողեալ մեր Հայաստանի օրհնեալ դաշտերը, անիծակուռ արհեստին քանդմանց ու արհաւիրաց տեսարանեցաւ: Օսմանեան ազգը իր ցեղին յատուկ բնազդմամբն ոգեւորած՝ պահ մը ետ մղեց ահագին թշնամին և յապուշ կրթեց զաշխարհ իւր արիական դիմադրութեամբ ու վերջապէս տեղի տուաւ աւելի մեծ գորութեան առջեւ, և Ռուսիոյ յաղթական բանակները մէկ կողմէն մինչև Հայաստանի մայրաքաղաքն եկան, և միւս կողմէն մինչև բոլոր Թուրքիոյ մայրաքաղաքն ի կ. Պոլիս: Ժամը հնչեց խաղաղութեան: Երկու տերութեանց բանակցութիւնն սկսաւ Քզանլըգի մէջ և ընդհանուր պայմաններն կռեցան յԱտրիանուպոլիս: Անմիջապէս պիտի սկսէր Դաշնադրութեան բանակցութիւնը:

Ոչ ոք կարող է բուռն զօրութեան դէմ, մանաւանդ երբ բարոյական զօրութիւն միայն ունի. և ո'վ ալ ըլլայ, չկրնար փոխել եղելութեանց ընթացքը: Մեծ խելք և մեծ հեռաւանդութիւն պէտք չէր տեսնելու համար թէ երկրին վիճակը կը փոփոխէր բոլորովին, և անոր հետ նաեւ անձնիւր քրիստոնէայ ժողովրդի գոյութեան պայմաններն ալ կը փոփոխէին: Մէկ խօսքով, փտանքն ակներեւ էր ինձ համար և ամենուն համար որ



Հայոց ազգը պիտի կրնար անհետանալ իբր ինքնուրոյն ժողովուրդ, և եթէ իր գոյութիւնը չամրապնդէր, պիտի ոչնչանար: Հարսաահարութեան խնդրոյն կ'աւելնար մեծ քան զայն խնդիր, ազգին գոյութեան ու չգոյութեան խնդիրը:

Այլ ընդհանուր պայմանեաց մէջ Հայոց ազգին անունն անգամ չիկար, և Դաշնադրութեան վիճարանութիւնը այն պայմանաց սահմանին մէջ միայն կրնար ըլլալ: Գրեթէ յուսահատելու էր, և ես չգիտեմ թէ ինչպէս չ'յուսահատեցանք: Յաջողիլ անկարելի էր սովորական միջոցներով, ոչ ալ սպասելը ներելի էր: Կրնայի ի ժողով կոչել գծեզ, և այն ատեն բան մը չընելով ալ՝ ձեր առջև պատասխանատուութենէ ազատիլ կրնայի գոնէ Բազաքական ժողովով գործէլ: Պե՞տք էր որ այնպիսի պարագայի մէջ նայէի միայն անձնական պատասխանատուութեան ու ձեր առջև անպարտ ելնելով խղճիս առջև պարտաւոր մնայի:

Տեսաք երեսփոխանք, անշուշտ անհետացած չէ ձեր յիշողութենէն այն օրերուն յիշատակը: Օսմանեան ազգը որ առատապէս հեղած էր իր արիւնն ի դաշտ պատերազմաց՝ այնքան զոհողութիւններէ ետքը իր պարտութիւնը տեսնելով, և այսքան չարեաց սկզբնապատճառ Բրիտանիոյ թեան անունը միշտ հնչելով իր ականջին, բնական էր որ արտաքոյ կարգի գործութիւն մը գդար: Աւելի քան երբեք պէտք էր խոհեմութեամբ ու շրջահայեցութեամբ գործել: Այլ նաև ուժով և ազգու կերպով գործել: Ձեր Պատրիարքը մասածեց, խորհրդակցեցաւ: Իր շուջն ունէր բոլոր եպիսկոպոսական դասը պատրաստ գործելու իրեն հետ և յանուն ազգին գոհուելու եթէ պէտք ըլլար: Միացաւ իր սրբազան եղբարց հետ և որոնք արդէն իրենց կոչման օրն առաջի Աստուծոյ երգուեալ էին, երգուան նուիրել զանձինս ազգին:

Օսմանեան լիազօր դեսպանք դեռ չէին ուղեւորած յԱտրիանուպոլիս, և ես և իմ սրբազան եղբայրակիցներս գործել սկսանք: Ազգին յայտնի էր այն ատեն ինչ որ ուղեցինք. այն է Հայոց յիշատակութիւնը դաշնադրութեան մէջ. և յայտնի է այսօր թէ այս յիշատակութիւն եղաւ մասնաւոր յօդուածով մը: Արդեօք ճիշտ

մեր ուզածին պէս եղա՞ւ յիշատակութիւնը. Ո՛չ, այլ քաղաքականութեան մէջ «երբ չես կրնար ընել ինչ որ կ'ուզես, պէտք է ընես ինչ որ կրնաս»:

Աւասիկ Այ-Ստեփանոսի Դաշնադրութեան 16 ըդ յօդուածը:

«Յօդ. 16 ըդ. Նկատելով որ ռուսական զօրաց Հայաստանի մէջ գրաւած բայց Թուրքիոյ վերադարձումն իր տեղերէն մեկմիլը կրնայ կոխմերու և երկու Տէրութեանց քարեկամական յարաբերութիւններու վնաս բերող կոնֆլիկտներու ծնունդ տալ, Դուռը պարտաւորութիւն յամծն կ'առնու, Հայոց բնական գաւառներուն մէջ տեղական պիտոյից պահամ ջած քարտքումներն ու՝ քարեմորոգումներն առանց այլ ևս յապաղելու գործադրել, և Քիւրդներուն ու Ձէրքէզներուն դէմ ամոնց առաջնորդութիւնն երաշխաւորել»:

Այս յօդուածին ուժովը Գրդերուն ու Ձէրքէզներուն Հարստահարութեանց դէմ ապահովեալ էին Հայք. իրենց տասը տարիէ ի վեր արձակած աղաղակը վերջապէս արձագանք կը գտնէր ու մեր յանուն ազգին ներկայացուցած խնդրոյն մէկ մասը կը լուծուեր ըստ սկզբան, և Համազգային իրաւանց կարգին մէջ կը մտնէր: Այլ մեր ազգային խնդիրը Սրեկեւեան ընդհանուր խնդրոյն հետ նոր կերպարանք ու նշանակութիւն առած էր:

Այս երկիրը մինչև այսօր կառավարուեցաւ տաճիկ պաշտօնատարաց ձեռքով. և այսօր Հասարակ եղած ճշմարտութիւն մըն է պաշտօնատարաց յուռութիւնը. այնպէս գինոյն իոկ Բ. Դուռը և երկրին վեհապետը քաղիցս հոգակեցին զայն: Արդ ճշմարիտ չէ ըսել մասնաւորապէս Հայաստանի Համար թէ Հայ ժողովրդեան պատուհասը Քիւրդներն են միայն ու Ձէրքէզները, այլ պատուհաս մըն ալ անարժան պաշտօնատարներն են: Այս պաշտօնատարաց մէջ, Հայաստանի մէկ ծայրէն միւս ծայրը, գրեթէ և ոչ մէկ Հայ պաշտօնատար մը կայ:

Պատերազմէն առաջ մեր վեհափառ ինքնակալը, այս մեծատարած կայսրութեան միահեծան տէր, սահմանադրութեամբ և Հաւասարութեան սկզբունքով փորձեց լուծել Սրեկեւեան խնդիրը, կրօնքի խտրութիւնը վերցունելով քաղաքական ու վարչական խնդիրներու մէջէն, ու



Տերութեան պաշտօնները հաւատարապէս բաշխելով իր ամեն կարգի հպատակաց, և անոնց մէջ մէկ հասիկ խտրութիւն մը ընդունելով այն որ իրաքանչիւրին կարողութենէն և անձնական արժանիքէն կը ծագի:

... Գեղեցիկ էր այն գործը յոր ձեռնարկեց իր գահակալութեան օրէն մեր այժմու վեհ. ինքնակալը, և ոչ ոք կրնայ մեղադրել զՀայս, որ յաւաստին: Այլ փորձն ի դերն ելաւ, և պատերազմն ու թշնամւոյն յաղթութիւնը եկաւ նոր ուղղութիւն մը առաւ արեւելեան խնդրոյն և նոր եղանակ մը ներկայացունել լուծման:

Շարունակելի

## ՆԱԽԵԿ Կ. ՊՈԼՍԻՆ

Կ. Պոլիս 10 Մարտ, 1893

Մեր վիճակը անհանդուրժելի դարձած է ամեն տեղ. ամեն անգ իստավարութիւնն է որ կը ճնշէ մեզ յատուկ նրպատակաւ մը: Կառավարութիւնն է որ յայտնապէս կը դրդէ թուրքը կամ Բուրդը դժընդակ նեղութիւն տալանպաշտպան հայ ժողովրդեան: Ձայն հաստատելու համար բաւ է յիշել միայն սպագորական օրինաց ծայրահեղ իստութիւնները, անցագրի մասին հանուած կաշկանդիչ դժուարութիւնները, հեռագրի ու նամակի վրայ գործուած զեղծումները, հանդէսներու և ամեն տեսակ համախմբման դէմ յարուցուած արգելքները... աւելցուր Կեսարիոյ և Մարտուանի վերջին դէպքերն և փոքր ինչ կը հասկնաս մեր կացութիւնը:

Կեսարիոյ դէպքերն ի մասնաւորի շատ ուշագրաւ են: Այդ քաղաքը ոչ ճամբորդ կրնայ երթալ, ոչ ալ անկէ ճամբորդ կրնայ դուրս ելնել. թղթակցութեամբ ալ ըւր չկրնար հաղորդուիլ, վասն զի թղթատունը ուղածին պէս կը վարուի նամակներու հետ: Այս միջոցներով կառավարութիւնն յաջողած է չթողուլ որ Կեսարիայէ որոշ ըւր հասնի ի Կ. Պոլիս: Սովայն այսքան խիստ արգելք և հսկողութիւնք ինքնին կը ցուցնեն թէ շատ կարեւոր դէպքեր կը պատահին հոն: Կըս-

ուի թէ թրքերն Հայոց շուկային վրայ յարձակելէն յետոյ՝ քանի մ'անգամ փորձեր են անոնց թաղը կրակի տալ, սակայն որովհետեւ սուներն քարաչէն են, փորձերը չեն յաջողեր: Այնուհետեւ Հայոց ալ գիններն գնացեր, աւեր, փայտաչէն ինչ որ գտեր են՝ կրակի տուեր են:

Կըսուի նաև թէ կիրակի օր Հայոց եկեղեցին մտեր են ամբոխով, ծեծեր ու կոտորտեր իրենց տոջն ելնողը, կիները մասնաւորապէս աւելի նեղեր և անոնց զարգերն յափշտակեր են:

Ասոնք շատ չափաւոր և մեղմ մէկ ամբոխութիւնն են Կ. Պոլսոյ մէջ պատմութեան, բայց բուն իրողութիւնն ինչ որ ալ ըլլայ, տարակոյս չկայ որ մեր հայրենակիցները սարսափելի կացութեան մասնուած են ի Կեսարիա:

Այս բոլոր շփոթութիւնները, ինչպէս յայտնի է, յառաջ եկած են այն յայտարարութեանց պատճառաւ որ վերջերս ներքին շատ մի քաղաքաց կառավարական չէնքերու, մզկիթներու, դպրոցներու և եկեղեցիներու վրայ փակցուած էին: Այս յայտարարութիւններէն շատ մը օրինակներ Կեսարիոյ մօտը գտնուեր են Յակոբ Էֆ. անուամբ ճանչցուած անձի մը վըրայէ, որ կ'ըսէ եղեր թէ ինքն Հայ չէ: Վերջապէս չորոշուեցաւ թէ ո՛ր է այդ յայտարարութեանց բուն աղբիւրը:

Յայտնի չէ թէ ամերիկեան կառավարութիւնն ինչ կերպով հասուցում պիտի պահանջէ Մարտուանի Ամերիկացւոց կրած վնասներուն համար: Ցարդ կարծեմ թէ Կ. Պոլսոյ նոր դեպքանը չէ կրցած գործ մը տեսնել:

Կաթողիկոսը քաջառողջ է, բայց չենք գիտեր թէ ինչ պատճառաւ գեւ Երուսաղէմ կը մնայ:

ԱՆԱՆՈՒՆ

## ՄԵԾ՝ ԵՐԿՐԵՇԼԻ

Ի ԹՈՒՐԻՔԻԱ

ՆԱՄԱԿ ՄԱԼԱԹԻՍՅԷ

20 Փետր. 1893, (ալաթուրքա)

36 ժամէ ի վեր երկրաշարժի սաստիկ ցնցումներ կը սարսեն մեր քաղաքն ու չրջակայքն: Մեր ծերերը կ'ըսեն թէ ասանկ շարժ ոչ իրենք տեսած են և ոչ ալ մե-



ծուռացմէ լսած են: Ահա այս վայրկենիս հեղ մ'ալ խաղաց գետինը: Այս նամակը այգին կը գրեմ: Երրորդութեան եկեղեցին և վարժարանը փլան, պապականաց եկեղեցին փլաւ, բողոքականաց եկեղեցին ալ գմբէթն խախտեցաւ: Շուկին մէջի բաղնիքը, Շուկին քովի բաղնիքը և Խարազի բաղնիքը փլան: Շարժին առաջին մեծ ցնցումն եղաւ 18ին, հինգշաբթի գիշեր ժամն ութին: Առաջու և Զիֆթիկի ղշլաներըն տակն ու վրայ եղան: Թօլիկենց փողոցէն մինչև Խարազան երկու կողմէն գրեթէ բոլոր տունները փլան: Ո՞րքանները արապայօք գերեզման տարին, այնքան շատ էին: Թիւթիւնի Պէթրի էֆէնտին փողոցը, տապախանային փողոցը բազում տներ փլան: Քարէ մինարէին գլխուն քարը ինկաւ: «Թէք չէշմէյէն» անգլին վնաս չեղաւ: Թայինց, Կարճըտիկենց, Շարիկենց թաղերը ֆլաւ չկայ: Զորիտի, Քիւլէյիկ, Թաժաէ, Ատաֆի, Վարի Քաղաք շատ վնաս եղաւ: Կարպետէ վրաններ կը յօրինենք ու ձիւնի վրայ, այգիներու մէջ կը մնանք առ այժմ, տուն երթալու կը վախենք: Հարիւրներով կը հաշուին մեռելներն:

## ՈՒՍՏՈՐԻ ՀԱՅՈՑ ՄԷՋ ՄԵՃ՝ ԿՈՒՒՒ ՄԻ

Հետեւեալն թարգմանութիւն է Ուսթոր քաղաքին մէջ հրատարակուող անգլիերէն «Թէշէկրամ» լրագրին Մարտ 27ի թիւէն:

ՎԱՐԴԱՊԵՏՆ ԷՐ Ի ԿՈՒՒՒՒՆ

ԱՐԻՒՆԱՀԵՂ ԺՈՐ «Ս. ՓՐԿԶԻ» ԵԿԵՂԵՑԻՆ  
ՑԻՈՅՆ ՄԷՋ Ի ԼՈՐԷԼ ՀԻԼ

ՀԱՅԵՐ ԿԸ ԶԱԽԵՆ ԶԻՐԵԱՐ

ՍԵՂԱՆՕՒ ԵՒ ԱԹՈՒՆԵՐՈՎ

Յ. ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԱՃԵԱՆ ԶԷՆՔ ԿԸՆ  
ԶԵՌԷ ՄԱՐՏՆԶՈՂԱՅ

ՏԱՍՆ ՀՈԳԻ ՎՆԱՍՈՒԱԾ ԵՆ

ԵՒ ՈՉ ՍԱԿԱՒՈՒՑ ՔԹԵՐ ՓՇՐՈՒԱԾ

Արիւնահեղ կռիւ մի եղաւ Ս. Փրկչի եկեղեցւոյն մէջ, ի Լորէլ Փողոցի, երէկ երեկոյ:

Տասն անձինք ֆուսուեր են, ոչ սակաւ քթեր կտորեր, և գտնուած ամեն կահ կարասի կտոր կտոր եղած է:

Այդ մին է քան զամենայն անոանձ և բիրտ կռուող որ երբէք տեղի ունեցած է այս քաղաքի մէջ, և այս կողմեր պատահած բոլոր եկեղեցային կռիւներու մէջ կը բռնէ առաջին տեղն:

Վեց ամսէ հետէ շարունակուող կռուին գազաթնակէտն էր այս, յորում Մ. Հ. Թոփհանէլեան էր հակառակութեանց սկզբնապատճառն կամ հիմն:

Վեց ամիս առաջ Կ. Կիրակոսեան աստեղապետ ընտրուած էր Հայկական Կաճառին, և երեք ամիս նախագահած էր ժողովոց ի կատարեալ գոհունակութիւն մեծամասնութեանն, բայց ոչ ի գոհութիւն Յովսէփ Վ. Սարաճեանի, որ Թոփհանէլեանի հաստատուն բարեկամն էր:

Թեւեկրամի ընթերցողաց ծանօթ է մի քանի շաբաթ առաջուան յուզումն որ Թոփհանէլեանի ծամածուռ ընթացքէն ծագած էր՝ սորա ամբաստանութեամբ առ Ուօշինկթընի օսմանեան ներկայացուցիչն՝ այս քաղաքի Հայ Գաղթականութեան նըկատմամբ: Նա ամբաստանած էր թէ Ուստըրի Հայերն յեղափոխական կացք ու գնացք ունէին հանդէպ թուրք կառավարութեան: ...: Յայնժամ Թոփհանէլեանին դէմ միաձայն քուէարկութեամբ որոշումներ տուին չորս հարիւր Հայեր: Սարաճեան Վարդապետն այդ խնդրոյ մէջ թեր ելաւ Թոփհանէլեանի, և կ'ըսուի թէ գաղտնապէս գործակից էր Թափհանէլեանի բարեկամաց հետ: Այս ընթացքով Հայոց մեծամասնութեան համակրութենէն զրկուեցաւ և եղաւ անժողովրդական: ...: Երեք ամիս առաջ, ի հեճուկս իւր ժողովրդեան մէջէն զօրաւոր բողոքոյ, և գլխովին չճանաչելով զԿիրակոսեան որ մեծամասնութեան քուէիւք ընտրեալ ատեղապետն էր, ինքն ատեղապետ ընտրեց զԹոփհանէլեան: Ասոր վերայ Կիրակոսեանի բարեկամք և Թոփհանէլեանի ու Սարաճեանի հակառակորդք քաշուեցան Կաճառէն ի պատճառս առաջնորդին բռնապետական ընթացից և սկսան զատ ժողով ընել ի Կրինճ ժողովասրահի: Սարաճեան յայտնի թշնամութիւն յայտարարեց հրաժարող անդամոց մեծամասնութեան դէմ որք իւր եկեղեցւոյ քան զամենայն լուսաւորեալ անդամքն էին:



... Այս էր իրաց վիճակն երբ Կաճառն ի նիստ գումարուեցաւ Ս. Փրկչի եկեղեցւոյ սրահին մէջ երէկ երեկոյ, յետ աւարտման եցեղեցւոյ: Իբր 125 անդամք ներկայ էին, ներկայացուցիչք երկու կուսակցութեանց, սակայն հակաթոփհանէլեանք աւելի շատուոր էին: Նոյն միջոցին նիստ կար նաև Կրէնճ ժողովասրահին մէջ: Հայր Սարաճեան եկեղեցւոյ ժողովին նախագահեց և, կ'ըսեն թէ, Թոփհանէլեանի հրաժարականն ալ ունէր ի գրպանի՝ ընթուկի: Նստին խնդիրն էր Թրփհանէլեանի ատենապետութեան խնդիրն:

Ժողովականաց մին ոտքի ելնելով թոյլտուութիւն առաւ նախագահէն ժողովին խօսելու: Յընթացս իւր պիտոյութեանց թելադրեց որ Թափանէլեան ատենապետութենէ ձգուի, նախ վառն զի նա ընտրուած չէր այդ պաշտօնին այլ վարդապետին կողմանէ անուանալ էր՝ հակառակ մեծամասնութեան բողոքին, երկրորդ վառն զի զնա մատնիչ կը նկատէին ազգայինք, իբրև ոմն որ սուտ ամբաստանութիւններ ըրեր է քաղաքին Հայ Գաղթականութեան դէմ, և ըսաւ թէ այնպիսի մարդն բնաւ երբէք իրաւունք չունի ատենապետ լինելու, և ամենևին տեղ չկար նմա իրենց մէջ: Նաև աւելցուց թէ Թոփհանէլեան էր բաժանման և խռովութեանց պատճառն, և թէ վարդապետին դործակցութիւնն ալ իրաց այս ցաւալի վիճակին պատասխանատու էր, և ըսաւ ի հուսկ բան թէ Թոփհանէլեանի հեռացումը անդորրութիւն պիտի լինէր:

Այս կետին կը սկսի յուզումն և ի վայր կեան ժամանակի 125 Հայերն բացարձակ կռուի կը բռնուին: Երբ ատենախօսն սկնարկութիւն կ'ընէ Սարաճեանի դէմ, իսկ և իսկ վարդապետն կ'ընդմիջէ զայն և կը հրամայէ լռել: Ատենախօսն չլռեր, և որպէս անդամք պատմեցին Թեղեկրամի ընդհանրութիւնը — Սարաճեան կը պոռայ ժողովրդին որ դուրս հանեն զայն:

Թող խօսի՛, կը պոռան անդամոց ոմանք:

Եւ յայնժամ այս ընդհատեալ ատենախօսութեան կը յաջորդէ վայրագ կռուին:

Ներկայ եղողներէն ոչ սակաւք կը հաւատեն թէ Սարաճեան ինքն մասնակցեր է կռուին ոչ միայն աթոռոց ոտքեր գործածելով յառաւելութիւն իւր այլ և ըն-

ձեռեր է զայնս նաև Թոփհանէլեանի կուսակիցներուն՝ յորդորելով որ չվախնան զայնս գործածելու, և յիրաւի նոքա ալ հետեւեր են իւր հրահանգաց: Տասն անձինք խուժ յարձակման առարկայ եղեր են և չորսին քթերն ջախուեր են ի կռուին: Երկու հոգի ալ ուստիկանութեան կայարանն վազեր են, ուրկէ փութացեր են միջամտել:

Ոստիկանական պաշտօնեայն յեկեղեցին կը հասնի ճիշդ կռուոյն ջերմագոյն պահուն: Սրահն խռնեալ էր ամբոխով, և ոչ աթոռ ոչ սեղան մնացած էր չջարդուած: Արիւնն երեսներէն վաղող մարդիկ աթոռներ կը ճօճէին օդին մէջ և նստարանի կտորներ կը սլանային ամեն ուղղութեամբ: Հարիւրապետ Ռօշ և յիսնապետ Մաք Մըրրէյ ցրուեցին ամբոխն:

Կէս ժամ յետոյ երկրորդ կռիւ մ'ալ Արշ Փողոցին մէջ եղաւ, որում միջամուխ էին 50 կամ աւելի Հայեր:

Թեղեկրամի ընդհանրութիւն մի այցեւեց եկեղեցին: Հայր Սարաճեան չուզեց նմա ու է տեղեկութիւն հաղորդել կռուոյն նըկատմամբ և ըսաւ թէ չգիտէ ինչ կերպիւ սկիզբ եղաւ կռուոյն:

Թեղեկրամի ընդհանրութիւն մի տեսաւ զԹոփհանէլեան, իւր տուն մէջ, որ ըսաւ թէ ինքը ներկայ չէր ժողովին և տեղեկութիւն չունէր դէպքէն:

(Ապա կը կրկնէ անգլիերէն թերթնանցեալ ժողովներու և Թոփհանէլեանի դէմ քուէարկութեանց արդէն ծանօթ պատմութիւնն, զոր աւելորդ կը համարիմք թարգմանել:)

( Ուստըրի կռիւին վերայ, նոր կտոր )

Նոյն քաղաքին « Տէյլի Սփայ » թերթին մէջ ևս կռուոյն պատմութիւնն կը գտնեմք, որմէ կ'առնուիմք կարեւոր կտորն միայն:

« ՀԱՅԿԱԿԱՆ ԺՆՈՐ »

« Երկար ատենէ իվեր քաղաքին Հայոց մէջ խռովութեան վերջն եկած չունի: Նոքա կըսեն թէ իրենց մէջէն Թոփհանէլեան անուն մէկը մատնած է իր հայրենակիցներն . . . : Հայ եկեղեցւոյն հովիւ Հայր Սարաճեան լաւ համարած է Թոփհանէլեանի կողմն բռնել, զի



սա թղթակից է թրքական լրագրաց։ Ուստի և հովիւն պաշտպան կանգնելով թոփհանէլեանի՝ անուանած է զնա փոխատենապետ Հայկական Կաճառին... Սարաճեանի այս արարքն իւր ժողովրդեան զայրոյթն գռգրեց։ Նոքա դժգոհութիւն յայտնեցին, բայց վարդապետն մտիկ չըրաւ, և յայտարարեց թէ պիտի ընէ որպէս ինքն լաւ կը համարի։ Ասոր վերայ Կաճառն պառակտեցաւ յերկուս, և մէկ մասն սկսաւ առանձին ժողով ընել ի Կրէնճ Հոլ։

Երեկուան նստին մէջ... Հակա—թոփհանէլեան մի երբ կ'առաջարկէր որ պաշտօնանկ լինի մատնիչն, Հայր Սարաճեան «վար նստէ» կը պոռայ, և ուրիշներն ալ «թող խօսի» կը գոչեն։ Յայնժամ թոփհանէլեանի կուսակիցներէն մին կը ջանայ բռնի տեղն նստեցունել զատենախօսն, և ահա կռիւն կսկսի, որում կ'ըսուի թէ, Սարաճեան ինքն ալ մասնակցեր է։ Արիւն առատօրէն կը վազէ, քըթեր կը ջախսեն, գլուխներ կը պատռեն, և ծայրայեղ յուզում կը ախրէ։ Կռիւն կէս ժամ շարունակած էր երբ ոստիկանութիւնն միջամտեց... Եօթ կամ ութ անձինք առաւել եկամ նուազ փնասուած են կռուին մէջ։ Ոմանց համար վիրաբուժական օգնութիւն պէտք եղեր է։ Ոստիկանք ոչ զոք ձերբակալեցին։»

Ընթերցողաց կը կրկնենք թէ «Հայք» երաշխաւոր չէ վերի կտորներուն ամեն մանրամասնութեանց ճշգրտութեան, այլ կը շատանայ առ այժմ թարգմանելով զայնս։ Եթէ խմբագիրն կարենայ այս շաբթուայցիւ վուսթըր, յետ քննութեանց պիտի կրնայ ճշգրիտ տեղեկութիւններ տալ ընթերցողացն և ընել իւր գիտողութիւններ։

## ԼՍՆՐԻԿԵՅԻ ՀԵՅՆՐՆ

ԿՐՆԱՅ ԳՈՐԾԱԴՈՒԼ (ՍԹՐԱՅՔ) ԸՆՆԼ

Ի Ուօքիլըն, Ուօչպըրն և Մօէնի թիլի գործարանին մէջ աշխատող Հայերն անցեալներ գործադուլ ըրած են իբր երկու օր, ինչպէս մեր նախորդ թուոյ մէջ պատմուած է։

Ընթերցողք կը յիշեն նաև թէ Հէյվըրհիլէ մեր ուրիշ մէկ թղթակից կը

գրէր «Այս տեղ գործադուլ չատ կը պատահի, անոր համար է թերևս որ գործարանապետն Հայերու թիւն շատցունել կ'ուզէ։»

Յայտնի է թէ մեր գործաւոր եղբարք այս երկրին լեզուն չգիտեն, որ իրենց մեծ թերութիւն կը սեպուի։ Եւ եթէ այդու հանդերձ կ'ընդունուին գործարանաց մեջ, մէկ պատճառն այն է որ գործապետք անոնց կողմէն գործադուլի վախ չունին։ Բայց անգամ մի որ Հայերն ալ գործադուլ ընող ճանչուին, ալ անկարելի է ըսել թէ հետեանքն ինչ կը լինի. Գուցէ մեր հայրենակիցք կասկածալի նկատուին ամեն տեղ և շատ աւելի նեղութիւն կրեն գործ գտնելու։

Այն անձն որ Ուօքիլի Հայ գործաւորներն դրդեր է գործադուլ ընելու, արդեօք խորհէր է թէ այդ շարժման արդիւնքն մինչև ո՞ր կրնայ հասնիլ։ Եւ մեր գործաւոր եղբարք պատճառ ունէին վստահելու նորա խորհրդոց և խոհեմութեան։

Եթէ արդարև Հայ գործաւորք ինչ ինչ թեթև արհամարհանոց նշաւակ կը լինին գործարանաց մէջ և գործարաններէ դուրս, ատոր դարմանն գործադուլ ընենէն է արդեօք, թէ ուրիշ կերպերով պէտք է ջանալ յարգելի հանդիսանալ, օրինակի համար՝ մաքրութեան աւելի հոգ տանելով, քաղաքակիրթ մարդու սովորութիւններն մշակելով և որ ի կարգին։

1881 ին Հապէշեան անուն ոմն Լինէ, Փրովիտէնտէ և Ուսթըրէ 28 խեղճ Հայեր ժողվեր և խոստացեր էր զիրենք տանիլ դործի դնել, և 175 տուար իբրև վարձք կանխիկ հաւաքելէ յետոյ՝ աներևոյթ էր եղեր։ Այս տարի ալ դարձեալ Հապէշեան ոմն 200 Հայ գործաւորներ դրդեր է գործադուլ ընելու։

Այս միւսնոյն Հապէշեան է թէ ուրիշ, չգիտեմք միք, բայց եթէ մեր Ուօքիլի Հայրենակիցք գիտէին թէ նոյն Հապէշեան է և իրեն ետեւէն գնացին, ինքեանք ալ արժանի են «ապուշեան» կոչուելու։



## «ՀԱՅՔ»-Ի ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

1. Առ Հայրենասէրս Բարիգաւ, որք ի ձեռն Մեծ. Յ. Իսկէնտէրի յղած են առ մեզ հետեւեալ նուէրներն. —

|                                                   |         |
|---------------------------------------------------|---------|
| Մեծ. Իսկէնտէր . . . . .                           | 100 Ֆր. |
| Հայրենասէր ոմն . . . . .                          | 200 „   |
| Վեց Հայրենասէրներ քսան և հինգական Ֆրանք . . . . . | 150 „   |
| Մասնաւոր մի հանգանակութենէ . . . . .              | 65 75   |
| Գումար . . . . .                                  | 515 75  |

## 2. Առ Հայրենասէրս Ամերիկայի

|                           |          |
|---------------------------|----------|
| Մեծ. Տեարք . . . . .      |          |
| Մ. Մ. Եագուպեան . . . . . | 10 տոլար |
| Չոփուրեան . . . . .       | 5 „      |
| Թիւֆէնքճեան . . . . .     | 3 „      |
| Ա. Ի. . . . .             | 10 „     |
| Հայրենասէր ոմն . . . . .  | 10 „     |
| „ „ . . . . .             | 10 „     |
| „ „ . . . . .             | 3 „      |
| „ „ . . . . .             | 1 „      |
| „ „ . . . . .             | 1 „      |
| Գումար . . . . .          | 53 տոլար |

Այս նուէրք ինքնին պատուական և կարեւոր «Հայքի» շարունակումն հնարաւոր գործելու համար, աւելի ևս պատուական են իբրև շօշափելի ցոյց այն համակրութեան զոր մօտէն ու հեռուէն Հայրենակցաց յարաճուն թիւ մի կ'արտայայտէ «Հայքի» գաղափարաց և ոգւոյն նկատմամբ:

Ներուի մեզ խոստովանիլ, առանց սընապարծութեան, թէ դոյզն է թէպէտ ծառայութիւնն զոր «Հայք» ի հրատարակութեամբ կը մատուցանեմք Ազգին, սակայն և այդու կը հրաւիրեմք մեր վերայ անհամեմատօրէն խոշոր թշնամանք և բազում անխիղճ հակառակութիւն որոց փոքր մասն միայն ծանօթ է հանրութեան, և որոց տոկալու համար ոչ ինչ այնքան սրտապնդիչ է մեզ որքան բարոյական յաջողութեան նշաններ տեսնել, որպիսի կը նշմարեմք այս տարի աւելի ընդհարձակ սահմանի մէջ և աւելի քաջալերիչ չափով:

Յուսանք, ազնիւ Հայրենակիցք իմ, և յարատեւեմք անխոնջ:

## Ազգային

## ԼՈՒՐԵՐ

Փոքր Ասիոյ մէջ տեղի ունեցած վերջին ահաւոր դէպքերն արձագանք գտած են Եւրոպեան մամուլը մէջ: «Մանչէսթըր Կարտիլըն» անուն անգլիական թերթն, Մարտ 15ի թուոյն, հետեւեալ կարեւոր հեռագիրն կը հրատարակէ. —

«ԾԱՆՐ ԽՈՒՎՈՒԹԻՒՆՔ Ի ԹՈՒՐԻՒԱ»

ՄԱՀՄԵՏԱԿԱՆ ԱՄԲՈՒՆԻՆ ՍԱՀՄԱՆԱ-

## ՉԱՆՑՈՒԹԻՒՆՔ

«Տէլի Նիւզ»-ի պատահական մէկ թղթակիցն հետեւեալն հեռագրեց Կ. Պոլսէն. —

Վատահալ տեղեկութիւն ստացուած է հոս՝ թէ ի Կեսարիա երեք Հայ եկեղեցիք կողոպտուեր են ձեռամբ մահմետական խուժանին, կիրակի առուր պաշտամանց պահուն: Ներկայ եղող կանանց գործերէն ներքին կորուցեր են: Սպանութեան բազմաթիւ դէպքեր տեղի ունեցեր են ի ձեռն Միւսլիմանաց ի Կեսարիա: Խանութներն շարքերով փակ պահուեր են առ ահի Միւսլիմանաց: Գործեր կառեալ կասեալ են, և անոնք որ առուրչէքով աշխատելով ապրուստ կը հայթայթեն՝ այժմ անսուղ մեռնելու վտանգին մէջ են: Քրիստոնեայ վաճառականաց համար կարաւանով եկող ապրանքներն կը կողոպտուին իսլամ գիւղացւոց ձեռամբ ի ճանապարհին, այնպէս ղի անօգուտ է Պոլսէն վաճառք ապսպարել այժմ: Կեսարացի Հինգ Հարիւր և տասն Հայեր ի բանտին են, և ուրիշներ որ չբնակայ գիւղերէն կը բերուին՝ բանտին մէջ տեղ մնացած չլինելով՝ տախտակէ յատկապէս շինուած խրճիթներու մէջ՝ լեցուեր են: Ի Եոզկատ՝ բանտք լեցուն են, և 65 երեւելի Հայեր ալ քաղաքին մերձաւոր գլխուորական խրճիթներու մէջ բանտարկուեր են: Ի Մարտուան, Եոզկատ և Կեսարիա գրեթէ ամեն մարդ որ քիչ չատ ճանչուած է ի Հայ հասարակութեան՝ ի բանտի է: Բաւական է որ մէկը հարուստ կամ կրթեալ լինի, նա անշուշտ պէտք է ձերբակալուի: Եոզկատի քան զամենայն ընչեղ Հայերու մէկուն՝ Համբարձում Էֆէնտիի՝ սպառնացեր է տեղւոյն միւսթասար-



րըՖ Զիա Փաշան թէ կամ խոշոր գումար մի պարտի վճարել կամ ձերբակալուիլ . և որովհետև մերժեր է վճարել, այժմ ի բանտի է: Այս բոլոր եռացում հետեանքն է յայտարարութեանց, զորս թուրք պաշտօնեայք կը վերագրեն Հայոց, և յորս սակայն թուրքերն են որ կը հրաւիրուին Հայոց դէմ ելնելու:»

\*

\* \*

Հետեւեալ հեռագիրն որ Կ. Պոլսէն ուղղուած է ամերիկեան թերթի մի և ուրիշներէ ևս արտատպուած է, աւելի մանրամասնութիւն կը պարունակէ .—

«ԱՆՀԱՐԻՆ ՆԱԽԱՏԱՆԱՑ ԵՆԹԱՐԿԵԱԼ  
ՀԱՅԵՐ

ՄԱՀՄԵՏԱԿԱՆ ԺԽՈՐԻ ԱՀԱԳԻՆ ԽԱՂԱՑՔ

ԿԱՆԱՑՔ ԵՒ ՄԱՆԿՈՒՆՔ ԽՈՂԱՆՈՂԵԱԼ

Կոստանդնուպոլիս 15 Մարտ. — Նորագոյն լուրք վերաբերութեամբ իսլամ ժխտմանցն ի Կեսարիա և ի Մարսուան կը հաստատեն թէ տաան Հայ մարդիկ և չորս մանկունք սպաննուած են ի Կեսարիա, ինչպէս և եօթն մարդիկ և երեք կանայք ի Մարսուան:

Կեսարիոյ եկեղեցիներն խուժող ամբոխն դաշուններով և լախտիւք զինեալ էին: Բռնի ներս մտնելով պաշտաման տան կը սկսին մականել յաջ և յահեակ: Զբարոզիչն որ մի քանի կիներ պաշտպանել կը փորձէ, զգետնելով կրկին և կըրկին դաշուններ են: Նահատակօրէն մեռեր է նա դեռ խուժանն չքաշուած: Կիներ մերկացուցեր են իրենց զարդերէն և պատուհանէն վար են նետեր: Շատերու տուեր են այնպիսի վէրքեր որոցմէ պիտի մեռնին: Երեք այր մարդիկ որք ջանացեր են ետ մղել խուժանն մինչ իրենց ընտանիքներ խոյս կուտային ետևի դռնէն, սպաննուեր են և կանայք ու տղայք ընդ քարչ տարուեր դուրս՝ ի փողոց, ուր ապստամբեցուցիչ թշնամանաց ենթարկուեր են:

Ամբոխն աշխատեր է այրել եկեղեցիներն, բայց զինուորաց վաշտ մի արգելք եղեր է: Թոյլ տրուեր է սակայն ամբոխին

հրկիզել սոսկականաց տներ: Ի Մարսուան Հայոց խանութներու ապրանքներն կողոպտեր են մինչ խանութտեարքն ի բանտի էին: Ոչ սակաւ Հայեր, յերեսաց վիրացն զորս ընդունած էին իսլամ խուժանէն, մեռեր են բանտին մէջ: Հայք դիմեր են նահանգապետին, որ սակայն ցարդ ոչ մի ջանք ըրած է զայնս պաշտպանելու:

Անգլիական և գերմանական դեսպանք ներկայացումներ ըրած լինելով Սուլթանին, սա հրամայեր է որ պաշտօնական քննութիւն կատարուի:»

\*

\* \*

Ողբացեալ Երգիծաբան Պարոնեանի այրին, Տիկին Սաթենիկ, մեռեր է:

\*

\*

\*

Մեղքիւնդեկ եպիսկոպոս Մուրատեան մերժեր է Տիգրանակերտի առաջնորդութիւնն, յոր ընտրուած էր վիճակին գաւառական վարչութեան կողմանէ:

\*

\*

\*

Հալէպի, Մարաշի, Եդեսիոյ և Մալաթիոյ մէջ վերջերս չարժ է պատահեր և բաւական ֆլաու հասուցած լինելով՝ Սուլթանն 300 ոսկի տուեր է: Ինպատարկածեցոց:

\*

\*

\*

Նիւ Եորքի մէջ Հայոց Յանձնախումբ մի ձեռնարկած է հանգանակութիւն մ'ընել ի նպատակ լոնտոնեան Առմէնիի: Ձեռնարկն յաջողութեամբ յառաջ կ'երթայ և շատ յոյս կայ որ առ նուազն հազար տուարի ամբողջանայ, այնպէս որ Մեծ. Չերազ կարենայ զթերթն ընել երկիւղուեան — ֆռանսերէն և անգլիերէն:

Այս Յանձնախումբ միայուն բնաւորութիւն ունենալով՝ տեսակ մի երաշխաւորութիւն է Նիւ Եորքէն ամ ըստ ամէ կարեւոր գումարի մի ընծայման յօգուտ Առմէնի-Սրմէնիայի հրատարակութեան:



«Լընտըն Թայմզ» կը տեղականամբ թէ Բ. Դուռն հրահանգ տուեր է իւր դեսպանաց եւրոպեան դաշլիճներուն ուրանալ պաշտօնապէս կեսարիոյ և Մարսուանի վերջին ժխորումներն :

\*

\* \*

Ամերիկեան դեսպանատան մէկ քարտուղարն ուղեորեր է ի Մարսուան՝ ստուգելու համար դէպքերուն մանրամասնութիւնն :

\*

\* \*

### ՏԵՂԱԳԱՆ ԼՈՒՐԵՐ

Կը խնդրուի մենէ ծանուցանել թէ Լին քաղաքի Արշալոյս Հայաստանի Հնչակեան մասնաճիւղն, Ապրիլ 23 ին, Կիրակի ժամ 1. 30 ին յետ կէսաւուր, պիտի տօնէ վարդանանց յիշատակը, ի 120 Օքսֆորտ փողոց :

\*

\* \*

Շիքակոյի Յուցահանդէսին Տնօրինութեան կողմանէ պաշտօնական հրաւեր մի ուղղեալ է առ խմբագիրն «Հայք»-ի՝ ներկայ լինելու «Հանրային Մամուլ Համաժողովին» որ պիտի սկսի ի 22 Մայիսի :

\*

\* \*

Թղթակից մի կը գրէ մեզ Ֆրէզնոյն .—

«Հոս տարիէ մ'ի վեր Գաստատուած է ընկերութիւն մը, որ յամր յառաջ կ'երթայ վասն զի տեղս դտնուող Հայերու կարող դասը անտարբեր ու սառն կը վերաբերի: Եռանդուն անդամներէն ոմանք անցեալները ներկայացուցին Պէշիկթաշլեանի Արշակ Բ. ողբերգութիւնը. նկատելով նիւթական միջոցներու պակասութիւնը, պէտք է ըսել թէ բաւական յաջողեցան, թէ և հասոյթը չհամապատասխանեց իւրեանց աշխատութեանն ու ակնկալութեան: Կը յուսանք թէ յաջորդ ներկայացում մը աւելի կատարեալ ու արդիւնաւոր պիտի լինի, մանաւանդ երբ այս պարոնայք հոգ տանին աւելի խնամով պատրաստելու իրենց դերերը:»

### ՀԱՄԱԺՈՂՈՎ Ի ՇԻՔԱՅՈՅ

Շիքակոյի Յուցահանդէսի պիտի բացուի մայիս 1 ին :

Յուցահանդիսին տեղութեան ատեն հետեւեալ համաժողովներն տեղի պիտի ունենան

|                                                   |          |
|---------------------------------------------------|----------|
| Խնդիր                                             | Թուական  |
| Կնոջ ընկերական դերն . . .                         | 15 մայիս |
| Մամուլն . . .                                     | 22 ,,    |
| Բժշկականութիւն և Վիրաբուժութիւն . . .             | 29 ,,    |
| Բարոյախօսութիւն և ընկերական բարեկարգութիւնք . . . | 5 Յունիս |
| Վաճառականութիւն, արհեստ և 19 ,,                   |          |
| Երաժշտութիւն . . .                                | 3 Յուլիս |
| Գրականութիւն Բանասիրութիւն և 10 ,,                |          |
| Դատարարականութիւն . . .                           | 16 ,,    |
| Գեղարուեստք . . .                                 | 31 ,,    |
| Կրօն, եկեղեցի, առաքեալութիւն և 5 Սեպտ.            |          |
| Հանրային առողջութիւն . . .                        | Հոկտ     |
| Երկրագործութիւն . . .                             | 16 ,,    |

\*

\* \*

Ինչպէս յառաջագոյն նշանակած եմք, նորէն կը կրկնեմք թէ Հայերու համար այժմ աւելի դժուարացեր են Ամերիկա մտնելու պայմաններն: Նոր եկողէն կը պահանջուի որ ինքզինք հոգալու և երկրին վերայ բեռ կամ նեղութիւն չլինելու վստահութիւն տայ կա'մ թէ ցուցնէ իւր մէկ ազգականն որ այս երկրին մէջ արդէն յաջողած լինելով՝ յանձն առնու նոր եկողին հոգն իւր վերայ առնու: Նաեւ կը պահանջուի որ նորեկն գիտնայ իւր մայրենի լեզուն կարգալ ու գրել, և ազատ լինիլ այնպիսի ցաւերէ և մարմնական կամ մտային պակասութենէ որ զմարդ անպիտանութեան կը դատապարտէ կամ յոճորագործութիւն կրնայ մղել:

\*

\* \*

«Պոսթըն Իվնինկ Թրէնսքրիթ»-ի Մարտ 18ի թուոյն մէջ կը գտնեմք «Հայ մի» ստորագրութեամբ յողուած մի Թրքա-հայոց հարստահարութեանց վերայ:



Շնորհակալութեամբ ստացանք ԱՌԱՔԱՅ Վեցամսեայ Պատկերազարդ Հանդիսի 1892 տարւոյ Բ. թիւն՝ ընտիր պարունակութեամբ:

ԱՌԱՔԱՅ, ի մէջ այլոց, կը պարունակէ զպատկեր Կիւլիզարի և զԳրիգոր Արծրունւոյն: Ուշադրութեան արժանի է Տ. Խորէն Նարպէյ Արքեպիսկոպոսի մասին պոլսական թղթակցութիւնն, որ անաչառ գրչի ծնունդ կ'երևի, և զպատրիարք Ալեքեան կը հարուածէ ըստ արժանւոյն:

## NATIONAL MUTUAL INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

ԱՌԱՔԱՅԻՆ ՓՈԽԵԴԵՐՁ

ԿԵՆՈՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ինչ ըսել է, գիտէ՞ք, Հայեր:

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք:

Մարդ մի, որոյ առողջական վիճակը քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշկին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ տարին այսչափ թալէս, 20 կամ 30 կամ աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր ժառանգորդք կ'ընդունին հազար թալէս, եթէ պայմանն հազար թալէսի է, կամ մինչև հինգ հազար թալէս, ըստ պայմանին:

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի, և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ, և դժբաղդաբար վաղն մեռնի, պայմանադրեալ հազար կամ աւելի թալէսն կը վճարուին ընկերութեանս կողմանէ այն ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն կնքուած լինի:

Այս մասին հետաքրքիր եղողներու «Հայք» ի խմբագիրն կրնայ աւելի անդելութիւն տալ:

«Հայքի» մուտքն ի Ռուսիա ազատ է:

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի: 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ:

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան: բազում ձեւերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք:

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէանի, 1891, գին 1 թալէս կամ 5 ֆրանք:

ՀԱՅ ԲՈՂՈՒԳԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՏԵԱՆՈՒ ԱՊԱՀԱՅՆ, 1888, նախապէս «Արևելք» ի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գաբրիէան: Գին 20 սէնթ կամ 1 ֆր.

«ՀԱՅՔ»

Թղթակազմ

Ա. տարի 1 տողար 50 սէնթ կամ 7 ֆր. 50ս. Բ. տարի 2 տողար կամ 10 ֆրանք

NORBERT FRANCK

ԴԵՂԱԳՈՐԾ

311 7դ էվինիու Նիւ Եորք  
27դ և 28դ Փողոցներու միջև  
Դեղագիրք կը պատրաստուին խնամով

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ էվինիու Նիւ Եորք  
26դ և 27դ Փողոցներուն միջև  
Դեղագրեր կը շինուին խնամով



KRONOFF & OLDSSEN  
FINE CUSTOM TAILORS  
And Dealers in

GENT'S FURNISHINGS  
ԴԵՐՁԱԿ ԵՒ ՀԱՆԴԵՐՁԱՎԱՃԱՌ  
214 Main St.  
WORCESTER MASS.

Յակոր Էթիզեան Կարապետ Էթիզեան  
348 Fountain Street 28 South Margin Street  
Providence R.I. U. S. A. Boston, Mass

ԵՂՆԵՐԻ Յ. ԻՐԻՉԵՆՆ

Յովհաննէս Էթիզեան Գէորգ Էթիզեան



**REGULATE THE  
STOMACH, LIVER AND BOWELS,  
AND  
PURIFY THE BLOOD.**

**A RELIABLE REMEDY FOR**  
Indigestion, Bilioousness, Headache, Constipation, Dyspepsia, Chronic Liver Troubles, Dizziness, Bad Complexion, Dysentery, Offensive Breath, and all disorders of the Stomach, Liver and Bowels.

Ripans Tabules contain nothing injurious to the most delicate constitution. Pleasant to take, safe, effectual. Give immediate relief.  
Sold by druggists. A trial bottle sent by mail on receipt of 15 cents. Address  
**THE RIPANS CHEMICAL CO.**  
10 SPRUCE STREET, NEW YORK CITY.

Ripans Tabules are of great value.

Ripans Tabules cure headache.

Ripans Tabules cure constipation.

Ripans Tabules : for sour stomach.

Ripans Tabules : for liver troubles.

Ripans Tabules : a family remedy.

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն  
Մ . Ո . Գ Ա Բ Ր Ի Է Լ Ե Ա Ն

**PATENTS** HOPKINS & ATKINS  
Washington, D. C. 20  
years' experience  
write for information

BUSH & CO.  
ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

Պ Ե Ղ Ն Ե Պ Ո Ր Մ

(Հաստատեալ ի 1849)

56 Front St. Worcester, Mass.  
Դեղագիրք խնամով կը պատրաստուին և  
չափաւոր գնով

THE WORCESTER MECHANICS  
SAVINGS BANK

311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԷԲԷՆԻՔՍ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԷՆԲ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կրնան ապահովապէս դնել վերոյիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը ճարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտ. ամսոց կէսէն հաշուելով:

A. A. McLAUGHLIN

137 MAIN ST.

WORCESTER,

MASS

Ես բազում Հայ յաճախորդներ ունիմ և ամեն շաբաթ երեկոյ Հայազգի վաճառող մ'ալ կը պահեմ վաճառատանս մէջ որ անգղիերէն խօսելու անվարժ Հայերու կը ցուցնէ մեր ապրանքներն, որք են գըլխարկ, վերարկու, սոնազգեստ (փանթոլոն), գուլպա, շապիկ ևն. ևն. Մեր գին ամենուն համար մէկ է եւ չափաւոր է. եկէք եւ տեսէք: